

28.12.12թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի, բացահայտում են <Շեն-Կոնցենո> ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝

25.12.2012թ-ին տեղի ունեցավ Ընկերության տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացում քննարկվեցին որոշ հարցեր և որոշում ընդունվեց 2013թ-ի հունվարի 29-ին, ժամը 11:00-ին Երևան, Շիրակի 2/2 հասցեում հրավիրել բաժնետերերի արտահերթ ժողով, որի նախապատրաստման ընթացքում տրամադրվող փաստաթղթերին բաժնետերերը կարող են ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում: Տնօրենների խորհրդի այլ էական որոշումները ներկայացվում են ստորև

1. Ընկերության կրեդիտորական պարտքերի մարման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջարկվեց Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին որոշում ընդունել 1,062,600,000.00 ՀՀ դրամ գումարային անվանական արժեքով լրացուցիչ հասարակ անվանական բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ:

2. Ընկերության կորպորատիվ կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով հաշվապահական հաշվառման վարումը (ֆինանսական, հարկային և կառավարչական հաշվառում) և ֆինանսական համակարգերի կառավարումը մասնագիտացված կազմակերպությանը հանձնելու անհրաժեշտությունը; Վերջինիս շրջանակներում ուղարկվել են համագործակցության առաջարկներ (մինչև 2013թ-ի հունվարի 12-ը պատասխան ստանալու ակնկալիքով)՝ հայաստանյան շուկայում գործող միջազգային և տեղական բարձր հեղինակություն վայելող աուդիտորական Ընկերություններին, իսկ մնացած այլ Ընկերություններին, որոնց չի ներկայացվել անհատական առաջարկ տեղեկացվել են ԶԼՄ-ների միջոցով տարածված հաղորդագրություններով:

Վերը նշված տնօրենների խորհրդի օրակարգից դուրս 2012թ-ի դեկտեմբերի 27-ին տեղի ունեցավ Ընկերության միացման արդյունքում Ընկերության բաժնետոմսերի Ընկերությունից ձեռքբերումը (վճարումը), որի արդյունքում բոլոր 10 բաժնետերերի

կողմից (յուրաքանչյուրը իրեն հասանելիք բաժնեմասի չափով) վճարեց ընդհանուր թվով 703,350,000.00 դրամ կանոնադրական կապիտալ: Նույն օրը մարվեց Ընկերության խոշոր բաժնետիրոջ 2011 և 2012թթ-ների ընթացքում ներդրված փոխառության պարտքը՝ 703,000,000.00 դրամի չափով:

No 28/12-1
1281 / 12 2012թ.



ՇԵՆ-ԿՈՆՑԵՐՆ ՓԲԸ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
նախագահ պրն. Ա. Զավադյանին**

Հարգելի պարոն Զավադյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի Ձեզ եմ ներկայացնում 'Շեն-Կոնցեռն' ՓԲԸ-ին վերաբերող 28.12.12թ-ի էական տեղեկությունը, որը նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (կցվում է առդիր 2 թերթ):

Տնօրեն



Պապ Բադայան